ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 09.06.01.82

ք. Երևան «26 » հունվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Արմեն Փաշայանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11025. Գնահատման և թեստավորման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **616 823 500** (վեց հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժերը,

2.1.4 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.12. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.13. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպությանկողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ,

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան,Կառավարական 2 շենք	Հասցե՝ ք. Երևան, Այգեստան 9/4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036697	Հ/Հ 900018003401
	ՀՎՀՀ՝ 01551257
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Փաշայան
Կ.Տ. /ստորագրություն/	Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված
2023 թ. հունվարի 26 -ին
կնքված N 09.06.01.82 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը /դրամ/
1	2	3	4	5	6	7
1	Պետական ավարտական և միասնական քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Շրջանավարտների և բուհ ընդունվողների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում՝ դպրոցն ավարտելու, բուհ ընդունվելու նպատակով: Բուհերի ուսանողական համակազմի համալրում: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում	Պետական ավարտական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 15000 բ) Մաթեմատիկա - 14000 գ) Հայոց պատմություն - 17700 Միասնական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 5000 բ) Մաթեմատիկա - 6000 գ) Հայոց պատմություն -2300 դ) Օտար լեզուներ (անգլերեն -5500, ռուսերեն - 457, ֆրանսերեն-88, գերմաներեն-126, իտալերեն	30.12.2023	180168.4

				-5, իսպաներեն-4, պարսկերեն-2) ե) Համաշխարհային պատմություն -41 զ) Կենսաբանություն 1327 է) Ֆիզիկա -1494 ը) Քիմիա - 1103 թ) Աշխարհագրություն 245		
2	TIMSS միջազգային ստուգատեսի անդամավճար	Մասնակցության վճար	Մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից անցկացվող միջազգային հետազոտություն : Ծրագիրը բաղկացած է փորձնական և հիմնական փուլերից:		30.12.2023	48000.0
3	Հիմնական դպրոցի ավարտական քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Հիմնական դպրոցի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման նպատակով ավարտական քննական նյութերի մշակում և տրամադրում: Թեստային առաջադրանքների գաղտնիության ապահովում	Հիմնական դպրոցի ավարտական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների ա) Մաթեմատիկա (գր.) - 35556 բ) Հայոց լեզու և գրականություն (բանավոր) -35556 գ) Օտար լեզուներ (անգլերեն -10977, ռուսերեն -21942, ֆրանսերեն-1020, գերմաներեն-1220, սովորողի ընտրությամբ -	30.08.2023	87642.0

				397, բանավոր) դ) բնագիտություն (կենսաբանություն -13909, ֆիզիկա -6074, քիմիա -1869, աշխարհագրություն -13704 սովորողի ընտրությամբ, գրավոր)		
4	Պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Շրջանավարտների և բուհ ընդունվողների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում՝ դպրոցն ավարտելու, բուհ ընդունվելու նպատակով: Բուհերի ուսանողական համակազմի համալրում: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում	Քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների Հայոց լեզու և գրակ.-1180 Մաթեմատիկա- 1270 Անգլերեն-610 Ֆիզիկա-350 Հայոց պատմություն- 240 Կենսաբանություն-270 Ռուսաց լեզու-160 Քիմիա- 100 Աշխարհագրություն-40 Ֆրանսերեն,գերմաներեն,իտալերեն 12	30.12.2023	53500.0
5	Փոխադրական (Էքստեռն) քննությունների անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների	Աշակերտների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում `հանրակրթական ուսումնական հաստատության հաջորդ դասարան փոխադրելու նպատակով: Քննական հավասար	1) Էքստեռն փոխադրական քննություն հանձնողների թիվը ըստ առարկաների և դասարանների	30.12.2023	16544.0

		ամփոփում	պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	ա) 1-6 –րդ դասարաններում `<<Մայրենի >> , <<Մաթեմատիկա >> (25 աշակերտ)  բ) 7-8-րդ դասարաններում `<<Հայոց լեզու >>, <<Մաթեմատիկա>>(5 աշակերտ) գ) 10-րդ դասարանում `<< Հայոց լեզու և հայ գրականություն >>, <<Հայոց պատմություն >> , <<Մաթեմատիկա>> (1 աշակերտ)		
6	Ավարտական էքստեռն քննությունների թեստերի տրամադրում	Թեստերի տրամադրում		9-րդ դասարանում- 200 աշակերտ 12- րդ դասարանում 300 աշակերտ	30.12.2023	727.3
7	Միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերում սովորելու հավակնորդ շրջանավարտների քննական թեստերի առաջադրանքների մշակում և տրամադրում	Քննությունների նախապատրաստում	Դիմորդների հմտությունների, կարողությունների և գիտելիքների գնահատում՝ արտասահմանյան բուհեր ընդունվելու նպատակով: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	Միջպետական համաձայնագրերով արտասահմանյան բուհերի դիմորդների թիվը ըստ քննական առարկաների ա) Հ.լեզու և հայ գրականություն – 10 բ) Մաթեմատիկա - 20 գ) Հայոց պատմություն - 10 դ) անգլերեն - 30 ե) Ֆիզիկա - 10	30.12.2023	11623.0

8	Ուսումառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայության անցնելու համար դիմում ներկայացրած քաղաքացիների թեստավորման իրականացում «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակում	Քննությունների նախապատրաստում,անցկացում և արդյունքների ամփոփում	Դիմորդի ընդհանուր զարգացածության գնահատում՝ <<Պատիվ ունեմ>> ծրագրի շրջանակում ուսումնառութուն ստանալու նպատակով: Քննական հավասար պայմանների ստեղծում և գնահատման օբյեկտիվության ապահովում:	<<Պատիվ ունեմ>> ծրագրի շրջանակում ուսումնառություն ստանալու նպատակով քննություն հանձնողների թիվը ըստ զինվորական մասնակցությունների ա)բնագիտական առարկանների թեստից քնություն հանձնողները - 100 բ) ընդհանուր զարգացվածության թեստից քննություն հանձնողները - 400	30.08.2023	21450.0
9	ԲՈՒՀ-երի ընդունելության մրցույթի կազմակերպում և անցկացում	Արդյունքների ամփոփում	Դիմորդների հայտերի հիման վրա բուհերի ընդունելության անցկացում:Մրցույթը կկատարվի երեք (առանձին դեպքերում երկու կամ մեկ) քննությունների գնահատականների հիման վրա՝ դիմորդների մրցութային միավորների համեմատման միջոցով : Ընդունելության օբեկտիվության ապահովում՝ համակարգչային	Ընդունելության մրցույթի մասնակիցների թիվը ըստ մասնագիտությունների - 10650	30.07.2023	44825.0

			հատուկ ծրագրով:			
10	Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպում և անցկացում	Քննությունների նախապատրաստում, անցկացում և արդյունքների ամփոփում	Աշակերտի ընթացիկ առաջադիմության անկախ գնահատում : Կբարելավի գնահատման գործընթացը՝ հետադարձ ազդեցությամբ նպաստելով ուսման որակի աճին: Տեխնիկական առաջադրանքները կսահմանվեն լրացուցիչ կերպով:	Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների թիվը -7000 աշակերտ՝ երկու առարկայից	30.12.2023	39850.0
11	Ազգային ստուգատեսի կազմակերպում և անցկացում	Քննությունների նախապատրաստում,անցկացում և արդյունքների ամփոփում	Աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակի բացահայտում՝բնագիտական և (կամ) հայագիտական առարկաներից: Հիմնական գործոնների ազդեցության չափի բացահայտում: Աշակերտների գնահատման օբյեկտիվության ապահովում, հավասար պայմանների ստեղծում: Տեխնիկական առաջադրանքները կսահմանվեն լրացուցիչ կերպով:	Ազգային ստուգատեսի մասնակիցների թիվը -5000 աշակերտ	30.12.2023	29564.0
12	Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների, ''Հանրակրթություն '' պարբերականի մշակում և տպագրում	Տպագրություն	Քննական գործընթացի վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տրամադրում:	Տպագրվում և հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվում է 1500 ական օրինակ ուղեցույց և պարբերական:	20.12.2023	2072.8
13	TIMSS 2023 մաթեմատիկա	Քննությունների նախապատրաստ	Աշակերտների գիտելիքների, հմտությունների և	ստուգատեսի հիմնական փուլի մասնակիցների թիվը-	20.12.2023	47051.1

	յից և բնագիտական առարկաներից սովորողների գնահատման ստուգատեսի հիմնական փուլ	ում,անցկացում և արդյունքների ամփոփում	ունակությունների ընդհանուր մակարդակի բացահայտում մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից: Հիմնական գործոնների ազդեցության չափի բացահայտում: Աշակերտների գնահատման օբյեկտիվության ապահովում, հավասար պայմանների ստեղծում	1500 աշակերտ		
14	Համակարգչային թեստավորում ուսուցիչների և սովորողների համար	Քննությունների նախապատրաստում,անցկացում և արդյունքների ամփոփում	Ուսուցիչների և աշակերտի ընթացիկ առաջադիմության անկախ գնահատում : Կբարելավի գնահատման գործընթացը՝ հետադարձ ազդեցությամբ նպաստելով ուսման որակի աճին: Տեխնիկական առաջադրանքները կսահմանվեն լրացուցիչ կերպով:	Ուսուցիչներ թիվը -40 Աշակերտների թիվը- 1000	30.12.2023	33805.9
	Ընդամենը / հազար դրամ/					**616823.5**

Նախարարության գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____Վ. Գասպարյան

Կ.S. /ստորագրություն/

Տնօրեն՝ Ա. Փաշայան

Կ.S. /ստորագրություն/